«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ » ՊՓԲԸ –Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Վանաձոր 08.06.2020թ.

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Եդոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Գնորդ), մի կողմից, և <<Իգվանի>> ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Վ.Առաքելյանի, որը գործում է <<Իգվանի>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ գրենական պիտույքներ և նյութեր (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և ժամկետներում տրամադրած ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և ժամկետներում տրամադրածն Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 256900 (երկու հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով ,վճարումը կատարվում է կանխավճարային կարգով:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,նախապես պատվիրատուի հայտի միջոցով: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.2 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,	<<Իգվանի>> ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49	ՀՀ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 41ա
ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ
ՀՀ 220055140267000	ՀՎՀՀ 06935016
ՀՎՀՀ 06907229	ՀՀ 2050222022821001
_____ Ա. Եղոյան	_____ Վ. Առաքելյան

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
15.05.2020թ. կնքված
ՎՅ-ՄԱԳՊՆՀԲ-2020 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագմանը երկիրը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	30197622	Թուղթ A4(2,5 Կգ)կամ մտկտուփ A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մ		Թուղթ A4(2,5 Կգ)կամ մտկտուփ A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մ	կգ	740	111000	150	Պ. Սևակի 49	150	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
2	30192121	Գրիչ /cello կամ համարժեք/ Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի		Գրիչ /cello կամ համարժեք/ Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	հատ	95	38000	400	Պ. Սևակի 49	400	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
3	30192710	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար թղթի ստվարաթղթի և տեքստիլի		Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար թղթի ստվարաթղթի և տեքստիլի	հատ	120	12000	100	Պ. Սևակի 49	100	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
4	30192130	Մատիտ գրաֆիտով /փափուկ/ Գրաֆիտե միջուկ մեխանիկական		Մատիտ գրաֆիտով /փափուկ/ Գրաֆիտե միջուկ մեխանիկական մատիտի	հատ	100	2000	20	Պ. Սևակի 49	20	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո

		մատիտի համար, անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB, ԳՕՍՏ Ռ 50249-92 կամ համարժեքը:		համար, անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB, ԳՕՍՏ Ռ 50249-92 կամ համարժեքը:							Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու20-րդ օրից
5	30192100	Ռետին/ Ռետինե ջնջոց /՝/սպիտակ- կապույտ/ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:		Ռետին/ Ռետինե ջնջոց /՝/սպիտակ- կապույտ/ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	90	2700	30	Պ. Սևակի 49	30	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
6	22811130	Տետր մեծ /A4 ֆորմատի/		Տետր մեծ /A4 ֆորմատի/	հատ	450	4500	10	Պ. Սևակի 49	10	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
7	22811130	Տետր փոքր /40 թերթանոց/		Տետր փոքր /40 թերթանոց/	հատ	140	4200	30	Պ. Սևակի 49	30	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
8	22851100	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար		Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	75	7500	100	Պ. Սևակի 49	100	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
9	30197231	Ֆայլ		Ֆայլ	հատ	970	4850	5	Պ. Սևակի 49	5	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո Հաշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից

10	30192160	բաղադրանյութ/շտրիխ/		բաղադրանյութ/շտրիխ/	հատ	240	4800	20	Պ. Սևակի 49	20	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
11	30192114	Թանաք կնիքի բարձիկի համար /կապույտ/		Թանաք կնիքի բարձիկի համար /կապույտ/	հատ	340	1700	5	Պ. Սևակի 49	5	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
12	22811110	Գրասենյակային գրքեր100թերթտողանի, սպիտակ էջերով		Գրասենյակային գրքեր100թերթտողանի, սպիտակ էջերով	հատ	500	40000	80	Պ. Սևակի 49	80	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
13	30141200	հաշվարքասարք գրասենյակային		հաշվարքասարք գրասենյակային	հատ	2500	10000	4	Պ. Սևակի 49	4	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
14	30197100	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, մեծ, բլոկներով՝ , 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ		Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, մեծ, բլոկներով՝ , 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	Տուփ /1000 հատ/	190	5700	30	Պ. Սևակի 49	30	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
15	30197111	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր փոքր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:		Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր փոքր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ	145	4350	30	Պ. Սևակի 49	30	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր

											կնքելու 20-րդ օրից
16	30197322	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար		Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	550	1100	2	Պ. Սևակի 49	2	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից
17	30197230	Թղթապանակ ֆայլերով		Թղթապանակ ֆայլերով	հատ	250	2500	10	Պ. Սևակի 49	10	Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից

Հ/Հ	Անվանումը ապանքայինը	Միավորի գինը	Մատակարարման ենթակա քանակները ըստ ամիսների															
			հունիս		հուլիս		օգոստոս		սեպտեմբեր		հոկտեմբեր		նոյեմբեր		դեկտեմբեր		Ընդամենը	
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Թուղթ A4(2,5 Կգ)կամ մտկ տուփ A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մ	740	80	59200			70	51800									150	111000
2	Գրիչ /cello կամ համարժեք/ Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	95	200	19000			200	19000									400	38000
3	Ծոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար թղթի ստվարաթղթի և տեքստիլի	120	50	6000			50	6000									100	12000
4	Մատիտ գրաֆիտով /փափուկ/ Գրաֆիտե	100	10	1000			10	1000									20	2000

	միջուկ մեխանիկական մատիտի համար, անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB, ԳՕՍՏ Ռ 50249-92 կամ համարժեքը:																	
5	Ռետին/ Ռետինե ջնջոց /՝/սպիտակ- կապույտ/ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	90	15	1350			15	1350									30	2700
6	Տետր մեծ /A4 ֆորմատի/	450	5	2250			5	2250									10	4500
7	Տետր փոքր /40 թերթանոց/	140	15	2100			15	2100									30	4200
8	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	75	50	3750			50	3750									100	7500
9	Ֆայլ	970	3	2910			2	1940									5	4850
10	բաղադրանյութ/շտրիխ/	240	10	2400			10	2400									20	4800
11	Թանաք կնիքի բարձիկի համար /կապույտ/	340	3	1020			2	680									5	1700
12	Գրասենյակային գրքեր100թերթտողանի, սպիտակ էջերով	500	40	20000			40	20000									80	40000
13	հաշվարքասարք գրասենյակային	2500	2	5000			2	5000									4	10000
14	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, մեծ, բլոկներով՝ , 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	190	15	2850			15	2850									30	5700
15	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր փոքր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	145	15	2175			15	2175									30	4350
16	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	550	1	550			1	550									2	1100
17	Թղթապանակ ֆայլերով	250	5	1250			5	1250									10	2500

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,

ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վ/Մ

ՀՀ 220055140267000

ՀՎՀՀ 06907229

Ա. Եդոյան

ՎԱՃԱՌՈՂ

<<Իզվանի>> ՍՊԸ

ՀՀ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 41ա

«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

ՀՎՀՀ 06935016

ՀՀ 2050222022821001

Վ.

Առաքելյան

Հավելված N 2
15. 05. 2020թ. կնքված
ՎՀ-ՄԱԱՀԲ-2020 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրապարակման նախատեսված չափաբաժնի համար	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	30197622	Թուղթ A4(2,5 Կգ)կամ մտկ տուփ A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մ	59200	59200	111000	111000	111000	111000	111000	111000
2	30192121	Գրիչ /cello կամ համարժեք/ Գնդիկավոր տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	19000	19000	38000	38000	38000	38000	38000	38000
3	30192710	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար թղթի ստվարաթղթի և տեքստիլի	6000	6000	12000	12000	12000	12000	12000	12000
4	30192130	Մատիտ գրաֆիտով /փափուկ/ Գրաֆիտե միջուկ մեխանիկական մատիտի համար, անվանական տրամագծերը՝ 0,5 մմ և 2,0 մմ, կարծրությունը HB, ԳՕՍՏ Ռ 50249-92 կամ համարժեքը:	1000	1000	2000	2000	2000	2000	2000	2000
5	30192100	Ռետին/ Ռետինե ջնջոց /՝/սպիտակ-կապույտ/ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	1350	1350	2700	2700	2700	2700	2700	2700
6	22811130	Տետր մեծ /A4 ֆորմատի/	2250	2250	4500	4500	4500	4500	4500	4500
7	22811130	Տետր փոքր /40 թերթանոց/	2100	2100	4200	4200	4200	4200	4200	4200

8	22851100	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	3750	3750	7500	7500	7500	7500	7500	7500
9	30197231	Ֆայլ	2910	2910	4850	4850	4850	4850	4850	4850
10	30192160	բաղադրանյութ/շտրիխ/	2400	2400	4800	4800	4800	4800	4800	4800
11	30192114	Թանաք կնիքի բարձիկի համար /կապույտ/	1020	1020	1700	1700	1700	1700	1700	1700
12	22811110	Գրասենյակային գրքեր100թերթտողանի, սպիտակ էջերով	20000	20000	40000	40000	40000	40000	40000	40000
13	30141200	հաշվարքասարք գրասենյակային	5000	5000	10000	10000	10000	10000	10000	10000
14	30197100	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, մեծ, բլոկներով՝ , 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	2850	2850	5700	5700	5700	5700	5700	5700
15	30197111	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր փոքր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	2175	2175	4350	4350	4350	4350	4350	4350
16	30197322	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	550	550	1100	1100	1100	1100	1100	1100
17	30197230	Թղթապանակ ֆայլերով	1250	1250	2500	2500	2500	2500	2500	2500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ,

ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վ/Մ

ՀՀ 22005140267000

ՀՎՀՀ 06907229

_____ Ա. Եդոյան

ՎԱՃԱՌՈՂ

<<Իգվանի>> ՍՊԸ

ՀՀ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 41ա
«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ
ՀՎՀՀ 06935016
ՀՀ 2050222022821001

_____ Վ. Առաքելյան